ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի ապրիլի 19-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27»

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ալյուրի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2018թ. ապրիլի 19-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1. Կից ներկայացվում է՝

Պարզաբանում N 1. Կից ներկայացվում է

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Տարոն Աբրահամյանին:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլեկտրանային փոստ՝ «t.abrahamyan@mil.am»:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախկինում պահանջվող պարզաբանմամբ չի տրվել բոլոր հարցերի սպառիչ պատասխան պարզաբանումներ, խնդրում եմ հստակեցնել՝

1. Հրավերի 14-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով նախատեսված է որ ռադիոընդունիչի գույնը պետք է լինի ***սպանդարտ կանաչ RGB(51,102,0), HEX(#336600)***, խնդրում եմ պարզաբանել,
   1.1 **արդյոք թույլատրվում է շեղում տվյալ ցուցանիշից և**
   1.2 **քանի որ ռադիոընդունիչը պետք է ունենա արևային լույսից սնվող էլեմենտ, իսկ տվյալ էլեմենտը չի կարող լինել *սպանդարտ կանաչ RGB(51,102,0), HEX(#336600)*, ապա ի՞նչ ընդունելի է արդյոք ռադիոընդունիչի այդ մասի գույնի շեղումը պահանջվող գույնից թե ոչ,**
2. Հրավերի 14-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով նախատեսված է որ ռադիոընդունիչի *հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը*, **խնդրում եմ անկախ նախկինում տրված պարզաբանումներից հստակ պարզաբանել հետևյալը՝**
   2.1 Ինչ է ենթադրում *հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը*, ինչպես է այն իրականացվելու,

   ## 2.2 Ինչ ժամկետներում է իրականացվելու նշված փորձարկումը և արդյոք փորձարկման գործընթացի ձգձգման դեպքում կկնքվի մատակարարման ժամկետի երկարացման համաձայնագիր թե ոչ:

3. **Արդյոք ակնկալվող պարզաբանման պատասխանները վերջնական և միանշանակ են, և արդյոք պայմանագիր կնքելուց հետո, պարզաբանման բովանդակությանը չհամապատասխանող մատակարարված ապրանքների ցուցանիշների մասով չի տրվելու համարժեքության մասին եզրակացություն:**

Ակնկալում եմ բոլոր նշված հարցերի սպառիչ և միանշանակ պատասխան:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ
ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հրավերի 14-րդչափաբաժնիվերաբերյալ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27>>ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին ուղղվածգրությամբ առաջադրված հարցերին պարզաբանում տալու առնչությամբ տեղեկացնում ենք.

<<Ռադիոընդունիչի գույնը>> գրառումը վերաբերվում է միայն ռադիոընդունիչի իրանին (корпус) և շեղում չի թույլատրվում, իսկ արևային մարտկոցին՝ չի վերաբերվում:

Նմուշի փորձարկումն իրականացվելու է պատասխանատու ստորաբաժանումում,մատակարարի կողմից ներկայացնելու օրը, որի ընթացքում ստուգվելու է նմուշի աշխատանքը և համապատասխանությունը տեխնիկական բնութագրի հետ, ինչը չի ակնկալում ձգձգվող և երկարատև ուսումնասիրություն:

Մրցույթի համապատասխան փուլերումհրավերով նշված ցուցանիշների գերազանցող շեղումը կդիտվի համարժեք, իսկ ցածր ցուցանիշներ ներկայացրած տեխնիկական բնութագրերը համարժեք չեն դիտվի:

ՀՀ ՋՈՒ ԹՎ ԻՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
գնդապետ Զ.ՄԵԼԻՔՅԱՆ